


ԴՐՈՇԱԿ



„ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒԱԿ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

Տ Ե Ր Ր Օ Ր Վ Ա Ն ՈՒ Մ

Հոկտեմբեր 20/2-ին տեղրօրի ենթարկեց ԿՈՍԻՑԱՍ ԶԱՎԱՆԱՆ:

**

—Այգեստանը պաշարած է, երկիւղ կը կրեն, որ դրսէն խմբեր կուգան:

—Սեպտեմբեր 11-ին, կուից վերջը Շաքիր փաշան, Փէրիք փաշան և իրենց հայ կաթօլիկ օգնականը թուռ ու մուռնջ հեռացան: Խստութիւնը պակասած է:

Ա Ն Դ ՈՒ Ն Դ Ի Ց Ա Ն Դ ՈՒ Ն Դ

Հայ յեղափոխական տարրը գերմարդկային ճիգեր է թափում, իր կաշւից դուրս է դալիս, շուտով հայի կիւսնքը վերակազմելու և մարդավայել պայմանները մէջ գնելու խիստ դու ի՞նչ ևս անում, հայ ժողովուրդ:

Դու փոխանակ ձեռք մեկնելու քո հարազատ հերոս զաւակին, որոտումից ու փոթորիկից սարսափած ոչխարի նման աչքերդ սրիւնկալած, առանց սար ու ձոր, ծով ու դեռ նայելու, թողնում ևս քո արիւնհեղեղ հայրենիքը, քո սիրելիների թարմ շիրիմները, քեզ դարերով մնուցանող անուշ հողն ու ջուրը և փախչում:

Ո՛ւր Մահից ևս փախչում. չէ՞ որ աշխարհի ամեն մի անկիւնում քեզ սպասում է աւելի վատ մահ, սարուկ մուրացիկին վայել մահ:

Մի՞թէ այնքան ցած ևս, որ հայի համար ձեռք մեկնած միջոցին մահանայը գերադատում ևս այն փառաւոր մահից, որին արժանանում է ազատութեան ղինուորն իր աննան իրական իրաւունքները և սուրբ զգացմունքները պաշտպանողը:

Մի՞թէ չես յիշում դարեր առաջ փախած կղւայրներիդ վիճակը:

Ո՛ւր են Լեհաստան, Հնդկաստան, Ծաւա և Ռուսա-նիա ու Հունդարիա գաղթած հայերը: Բոլորն էլ կորել:

գնացել են և անաղին սեւ բիծ թողել մեր ազգի վրայ:

Այսօր դու էլ ընթանում ևս նոյն կորստաբեր ճամբով, քո ոտքերի տեղերը արդէն երևում են Ամերիկայի և Աւրիկայի ամենահեռաւոր ու յետ ընկած անկիւններում: Ինչի՞ համար ևս գնում, քո սարկական գոյութիւնը պահպանելու և մի պատառ չոր հաց ճարելու համար:

Ամօթ քեզ հայ ժողովուրդ, դու ուղում ևս մի աստանդական հրէայ դառնալ և արատաւորել քո բոլոր սուրբ յիշատակները: Փոխանակ հայրենիքում մնալու, քարով ու փայտով, սրով ու հրով քո թշնամու դէմ կռիւ մղելու, դու դառնում ևս մի սփրայործ, դաւաճան և վատարար անդունդից անդունդ փախչում:

Այո՛, քո այդ ընթացքը—գաղթելը կորստաբեր է, ամենաանարատիկի կտորածները ոչինչ են դրա դիմաց. մի ազգի կորստեան պատճառը գաղթականութիւնն է: Այդ փախուստով վերջ ևս տալիս «Հայկական հարցին» և յաւիտենականապէս զրկում քո մարդկային ամենավեհ իրաւունքից—հայրենիք ունենալուց: Բանի ուշ չէ՛ յետ դարձիր, կու՛ր, մինչեւ վերջին շունչդ պաշտպանիր քո հարազատ երկիրը և քո բոլոր իրաւունքները:

Հակառակ դէպքում դու արժանի ևս ամենաստոր վիճակի: Ստրկական գոյութեան համար ամեն սուրբ բան զոհող ազգի բաժինն է լոկ զղւանք ու արհամարանք:

Եւ դո՛ւք, երջանիկ հայեր, վերջապէս բացէք ձեր կուրացած աչքերը, տեսէ՛ք, դատարկում է այն երկիրը, որը ամբողջ հայութեան յոյսն ու ապաւէնն էր և որտեղից ամենքս էլ նոր լոյս և նոր կեանք ենք սպասում:

Հայկական որորանը դատարկում է. հայը կորչում—ջնջւում է: Հասկացէ՛ք, տաճկահային ո՛չ հայ՝ այլ դէ՛սք է պէտք:

Ողճահարւեցէ՛ք, փախստական տաճկահային հայի հետ և զէ՛նք տւեցէ՛ք միայնէ՛ք նրանց հետ և անցէ՛ք Տաճկահայաստան վերջապէս կատարեցէ՛ք ձեր պարտքը: Տաճկահայի մղած կռիւը ամբողջ հայութեան վերածնութեան համար է. նա իր ուժից վեր ճիգեր թափեց, իր ուժից վեր դո՛հեր տւեց, Նրա ստրկութիւնը ամօթաբեր է աշխարհիս բոլոր անկիւններում յարդի նման շաղ ընկած հայերիս համար: Նրա կորուստը մահաբեր է ամբողջ հայութեան համար, որովհետեւ ոչ մի ազգ առանց սեփական հայրենիքի չի կարող գոյութիւն ունենալ—չի կարող մարդկութեան արժանաւոր անդամ լինել:

Այս, պէսի հայրենիք, ո՛չ հայրենիքից դուրս:
 «Ո՛ւր բարով» կոչում էին մեր անմտաց Պետօն եւ իր
 ընկերները Վասպուրականի ժողովրդին
 Ո՛ւր բարով, դառնութեամբ կրկնում ենք եւ մենք խե-
 ւակորոյս փախստական հայ ժողովրդին:

Թ Ո Ղ Յ Ի Շ Ե Ն

Այս անիծեալ դարավերջը արդեօք վերապահած է դեռ
 անակնկալ պատուհաններ . . .

Ո՛վ մտքէն կանցնէր, թէ առաջդիմութեան այսքան մե-
 ծագող ազգականներէ, շլացուցիչ հաստատութիւններէ յե-
 տոյ, որոնց վրայ կը պսպրան «ազատութիւն, եղբայրու-
 թիւն ու հաւասարութիւն» մեծանշան բառերը, մարդկու-
 թիւնը դեռ հինաւուրց բնազդներ պիտի կրէր իր մէջ: Յու-
 սախաբուրթիւնը կատարեալ էր:

Մարդկային ընդհանուր բարձր սկզբունքները եւ քա-
 ղաքակրթութիւն անուրը կարծես խանձ մ'եղած են աւե-
 լի միամիտ ժողովուրդները խաբելու եւ շահագործելու:

Գոնէ իրողութիւնները մեզի այնպէս ենթադրել կուտան
 Արեւելեան յաւիտենական հարցը մարդկութեան սե-
 բունները իւրեք արդեօք այդ յաւիտենականութիւնը պիտի
 շարունակէ՞ թշուառ ժողովուրդներուն ճիտին մեղքն ըլ-
 լալ: Այդ է, որ կըբաղեցնէ մտքերը:

Արեւելեան հարցը միջազգային խնդիր մ'է. ամեն մարդ
 իրաւունք ունի խանուելու եւ ամեն մարդ իրաւունքը չու-
 նի խանուելու: Օղին մէջ առ կախ բան մը: Ատոր համար
 է, որ այդ խնդիրը կը հոսի, կապականէ միջալայրը եւ
 սակայն անմատչելի է:

Հիւանդ մարդը, որուն շուրջը կը դառնայ հարցը կը
 սատկի, կը լիննայ. իր մարմնէն ժայթքած դարչանքները
 կը մահացնեն երկրին մէջ գտնուած քչիկ մը կենսականու-
 թիւնը, քաղաքականութիւնը քայլ մ'առաջ չի շարժիր:
 Հիւանդ մարդը պէտք է խելագարի՝ նոյն իսկ իր ստեղծած
 միջնորդատն մէջ:

Մարդկութիւնը քաղաքակրթութեան շահերէն աւելի
 բարձր նկատում մը ունի, աղչային նեղ շահեր ու բռնակալի
 սին փառասիրութիւններ:

Թիւրքիան սուրը իր կուշտը կը մխէ— ո՛վ է մեղաւորը,
 հա յը, կրետացի՞ն կամ մակեդոնացի՞ն: Բնութեան ու ա-
 ռաջդիմութեան անսասան օրէնքն է, ան՝ որ չի քալեր՝
 պէտք է կոխտուի:

Պէտք է քալել, պէտք է հեւի՞նել վազել այս դարուն
 մէջ: Լուսոյ եւ գիտութեան ծարաւի ժողովուրդ մը ջար-
 դելը մարդկային չէ: Այն գլուխը, որ չարիք կը յղանայ
 կատախիատին վրայ միայն կրնայ քաւել իր մեղքը:

Թիւրքիան, պիտո ս, 500 տարւան մէջ մէկ անգամ դո-
 նէ չի տեսաւ իր հորիզոնին վրայ քաղաքակրթութեան
 գաղջ արեղը: Օր մը այդ դժբախտ ժողովուրդը չի սրբեց իր
 արցունքները, եւ ուրախութիւնը չի փայլեցաւ անոր տըխ-
 րամած դէմքին վրայ:

Այս է մարդկութեան օրէնքը. ո՛վ չի շարժիր, պիտի
 փտտի կեցած տեղը: Համար դեռ չըմբռնեց, թէ Մուհամ-

մէտի խըրդան չէր կարող տիեզերական օրէնքները խախ-
 տել:

Ամեն մարդ ս՛ջը սրտին դրած կը խոստովանի, թէ Թիւր-
 քիան իրրեւ աւաղակային պետութիւն՝ սքանչելի կազմա-
 կերպութիւն է, բայց իրրեւ բարուք վարչութիւն՝ անչա՛
 ու անպիտան է:

Եղաւ ինչ որ պէտք չէր ըլլար: Համարը հայերը ջարդեց
 եւ քաղաքակրթութեան երեսին չպրտեց անմեղներու ան-
 թիւ գոնէր: Մարդկային խիղճը դեռ նոր կարթնայ եւ կըմ-
 բռնէ, թէ Թիւրքիան երկրային դժոխք մ'է: Երբ այդ խիղ-
 ճը արթնցաւ, Համարը այլեւս յղժիպցած էր: Կաթւածա-
 հար ընող յղժիպցում մը սակայն:

Քաղաքական աշխարհը, եթէ ոչ քաղաքակրթ աշխար-
 հը, կը տեսնէր ամեն բան ու չէր շարժեք տեղէն, որովհե-
 տեւ ամենքն ալ նիւթական շահեր կակնկալէին այդ հակա-
 մարդկային գոհաբերութեան մէջ: Ռուսիա աւելի հեռունե-
 րը կը նայէր, Թիւրքիոյ կործանումը եւ հայերուն բնաջն-
 ջումը. ատոր համար է, որ ամեն անկերկրի վարմունք
 ունեցաւ Թիւրքիոյ արհաւիրքներու շարունակման համար:
 Չէ՞ որ մէկ քարով երկու նապաստակի կը հասնէր: Ան-
 շուշա «Քրիստոնեաներու պաշտպան» ցարը կը շարունակէ
 իր մաքիավելական ընթացքը, եթէ Եւրոպայի բարեխիղճ
 կարծիքը իր հզօր ձայնը չի բարձրացնէ: Այդ վերկարար
 ձայնը սկսած է սաստկանալ արդէն:

Ցարը ոչ միայն կը խաղայ սուլթանին հետ, այլ նաև
 ամբողջ Եւրոպայի հետ: Երբ քաղաքակրթ եւ քաղաքա-
 կան աշխարհը աչքերը յառած սրբազան ցարին, որ վերջ
 դնէ քստմեղի սարսափներուն ինքնակալը՝ քմիծաղով կը
 նայի իր ոտքին տակ սողացող համօրէն մարդկութեան
 վրայ: Եթէ Կեսար դար մը վերջը գար, պիտի ըսէր թերեւս
 «Նիքոլան դեռ 30 տարեկան չիկար, բայց աշխարհը իր ոտ-
 քին տակ առած էր»: Երկզուէն արծիւ աղատ կը սաւառ-
 նի թրքական դիակի շուրջը:

Ռուսիա պիտի լսէ՞ քաղաքակրթութեան բողոքին, վեր-
 ջապէս՝ պիտի գիշանի՞ իր զօրութեան բարձունքէն «բա»
 է պոռայ սուլթանին: Մեղի համար կասկածիլի է:

Վերջին քաղաքական լուրերը տարտամ եւ աւելի հա-
 կասական ենթադրութիւններով լի են, իբր թէ Հայկական
 կիզիչ հարցը վճռական շրջանի մը մէջ կը մտնէ: Նեխտօֆի
 Բեդրաստրիկ այցը, վերադարձին Աւստրիոյ նախարարապե-
 տին հետ երկար տեսակցութիւնը շատ մը լաւատես մտքեր
 բարենշան կը համարին:

Նեխտօֆ յայտարարած է իր կառավարութեան, թէ Ռու-
 սիոյ համար արեւելեան խնդրոյն միջամտելու ժամանակը
 հասած է:

Այս իրադարձութեան առթիւ «Թան» կը գրէ «Նեխտօ-
 ֆի Պոլիս վերադարձը արեւելեան հարցին դանդաղ բարե-
 շրջութեան մէջ աչքի զայնող թւական մը կը յուշնէ . . .
 դայթակղանքը իր վախճանին կը ժօտենայ . . . վերջապէս
 բանի մը յանդերու ժամանակն է»:

Մնալով միշտ զգոյշ եւ թերահաւատ այդ տեսակ լուրե-
 րու մասին, սակայն յոյս ունինք, թէ մեր կամքը պիտի
 յաղթահարէ բազմաթիւ խոչնդոսներու: Յեղափոխութիւնը
 բռնակալներու քմահաճոյքէն աւելի զօրեղ է:

Եթէ դիւանագէտները՝ գճուճ հաշիւներէ մղւած, ստիպ-
 ւած են բան մ'ընել կամ զիրար չհեղձացնելով անգործու-
 թիւն դատապարտել, այդ ժամանակ քաղաքակրթ
 մարդկութեան բողոքին պիտի մնայ յեղափոխութիւններու
 ամենէն սոսկալին:

Կը հաւատարմութեան քաղաքացի, թէ ոչինչ մշտնջենական է: Վերջապէս ամենէն կարծրասիրտ դիւանագէտն ալ Չղիւր ունի: Հայը չի մոռնիր, բայց «Հայկական հարցը» շատ հաշիւներ կրնայ խանդարել: Այդքանը գոնէ լաւ բնութեամբ է:

Դէս ու դէն խօսուած ճառերէն եւ պտտած լուրերէն կը հետեւի, թէ Անդղլիա եւ Ռուսիա համաձայնութիւն գոյացուցած են ինչ-ինչ կէտերու վրայ:

Ախոս՝, բազմազիւսի փորձառութիւնները այնքան խրատասիրտ բրած են մեզ, որ ամենէն բարեացակամ դիտումներն իսկ իարեւարութիւն կը թւին մեր աչքին:

Ամեն պարագայի մէջ ընդունինք, թէ մութին մէջ բաներ կը գտնանաւ «Հիւանդ մարդը» գէշ նախադրացումներ ունի: Վտանգը թէ գրուին է, թէ ներսէն:

«Ներխուստարց թիւրքիան» կը ջանայ փրկել իր հայրենիքը մօտայուտ կործանումէն: Համարը իր կանանոցի հետ ծովուն անդունդը գահաժիթելով:

Իսկ այդ հրէշը չամնչնալով՝ հայոց պատրիարքին մեծ-մեծ խոստումներ կընէ, ինչպէս կընէր երբեմն Ներսէս պատրիարքին: Այս գերազանց բոպէին պատրիարքը լաւ նկատելու է, որ դիմացինը Համիտ մ'է, որուն ձեռքերը 130000 հայերու արեւնով շողալուած են:

Հայ ազգը իր թշուառութեանը մէջ դեռ աննկուն եւ խրոխտ կը մնայ: Խոստումներէ չի շլանար եւ իր պահանջներէն մէկ հատ չի զոհեր:

Կտտակի ժամանակը չէ: Սուլթան եւ պատրիարք թող յիշեն օգոստոս 14-ը:

Դ Ա Յ Ն Ա Կ Յ Ո Ւ Թ Ե Ա Ն

Հ Ա Յ Դ Ո Ւ Կ Ա Յ Ի Ն Խ Մ Ի Ի Կ Ո Ւ Ի Ը

Վ Ա Ն Ո Ւ Ս

I

Վանի պրովինցիոն կոտորածից յետոյ, կոիւ քաղաքում թնդանօթների դէմ:

6/18 հոկտեմբեր 96 թ.

Սուլթանի սիրելի Ֆէրիկ Սաադէդդին փաշան, Վասպուրականի սոսկալի կոտորածի հեղինակը, որը իր տիրոջ իրագէտով Հայաստանում բէֆօրմներ մտցնող յանձնաժողովի անդամ է կոչուում, հրձուում էր հայերի հաղարաւոր դիակներով նա իրագործել էր իր տիրոջ բուն ցանկութիւնները, իսկ հայ ժողովուրդը, ճի պարզ է, նա ողբում էր իր հաղարաւոր զաւակների կորուստը, որոնք ընկան թէպէտ թշնամու ձեռքով, բայց շնորհիւ եւրոպական հիւպատոսների կազմած դաւերի:

Գաւառներում տեղի ունեցած կոտորածից անելի ծանր էր այն կորուստը, որ ունեցան վասպուրականցիք սահմանազուլուններում: Պետօի, Մարտիկի և Աւետիսեանի հետ ընկան գրեթէ ղանի և շրջակայքի երի-

տասարգութեան աչքի ընկնող ուժերը: Սուգ է ամեն տեղ. իւրաքանչիւր ընտանիք ողբում է իր կորուստը: Ընդհանուր այդ սուգի, յուսահատութեան ժամանակ վերադառնում է Վարդանը իր խմբով Փեսան-Դաշտից, ուր օրինակելի քաջութեամբ պաշտպանեց հայերին անխուսափելի կոտորածից:

Լքուած ժողովուրդը նորից տեսնում է խիզախ յեղափոխականներին, որոնք ղէնքը ձեռքին պատրաստ են նորանոր դիմադրութիւններ ցոյց տալու թշնամուն: Նորից ժողովուրդը սկսում է ոգևորել և որպէս դրա արդիւնք՝ մի տէրրօրական գործողութիւն պարզում է Սաադէդդին փաշային, որ դեռ ուրախանի պէս գոյութիւն ունեն յեղափոխականները, որոնց ջընջել չկարողացաւ ահաբեկ կոտորածներից յետոյ անգամ:

Այդ նոր շարժման հեղինակները Վարդանը և Վազգէնն էին, որոնց ձեռք ձգելու համար կառավարութիւնը չենայեց ոչ մի միջոց:

Այդ ժամանակները մտնում է քաղաք ամենայն յաջողութեամբ «Դաշնակցութեան» հայդուկային խումբը, քիչ յետոյ՝ երկրորդը: Ժողովուրդի մի մասի ոգևորութեանը չափ չկար: Սիրով, գրկաբաց նա ընդունեց յոգնած, վաստակած հայդուկներին, որոնք ապագայի նոր յոյսեր էին ներշնչում: Բայց ափսոս, ոգևորութեան այդ նոր շրջանը երկար չէ տևում: Հանրային աղէտները, տիրող վճատութիւնը ստեղծել էր Վանում մի ամբողջ բանակ կառավարութեան գործիք դարձած անարգ դաւաճանների, որոնք տեղեկութիւն առնելով խմբերի մուտքի մասին, անմիջապէս հասցնում են Շաքիր-փաշային: Սա մի արատ, մի սև բիծ է, որը երբէք չէ սրբւելու վանեցիների ճակատից:

Շաքիր փաշան պաշտօնապէս պահանջում է առաջնորդարանից յանձնել իր ձեռքը խռովարարներին, հակառակ դէպքում սպառնալով սարքել նոր կոտորածներ: Այդ լուրը սարսափ է ազդում, ահաբեկում անպաշտպան ժողովուրդին: Նա տեսնում է փողոցներում, եկեղեցու պատերին կպցրած սպառնալից յայտարարութիւններ կառավարութեան կողմից: Բարդուղիմէոսի կուսակից առաջնորդական փոխանորդ Արէն վարդապետը նոյն իմաստով քարոզներ է խօսում եկեղեցու բեմից. նա՝ այդ գառնազգեստ գայլը, յորդորում է ժողովուրդին աջակցել կառավարութեան՝ ձերբակալելու յեղափոխականներին:

Սարսափը տիրում է ամենքը երեսները դարձնում են յեղափոխականներից: Ոչ ոք չէ համաձայնում ապաստարան, տեղ տալ անգամ՝ խմբերին: Տեսնելով ժողովուրդի այդ վերաբերումը, Վարդանը բռնի ուժով տեղաւորում է խմբերը այն հայերի տներում, որոնք կըռւի տեսակէտից յարմար դիրքեր ունէին: Տան տէրերը սարսափահար թողնում են տուն-տեղ, յայտնելու կառավարութեան եղելութեան մասին:

Մեպտեմբերի 10-ն էր. խմբերից մէկը Բուլգարացու առաջնորդութեամբ գտնուում էր Արաշունց թաղում: 300 զօրք շրջապատում են տունը և պահանջում անձնատուր լինել: Հայդուկները պատասխանում են հրացանի մի հարևածով, որը մաքրում է փողոցները զօրքերից: Օգտուելով դրանից, հայդուկները փակում են դռները և ամրանում տան մէջ: Սկսում է կռիւ. գնդակները տեղում են երկուստէք. ընկնում է մէկ զինւոր, մէկն էլ վիրաւորուում: Վատաղած ասկեարներն ուրիշ ելք չգտնելով, սկսում են դուռը պրել, իսկ միւս մասը աշխատում է ներս խուժել, սակայն հանդիպում է խիստ դիմադրութեան: Սկսել էր մթնել: Արակ են տալիս տունը, առաւելապէս ուշադրութիւն դարձնելով այն սենեակի վրայ, որտեղ տղայքն են ապաստանած. վերջիններս իրենց գործն են տեսնում. մի կողմից աշխատում են կրակը հանգցնել, միւս կողմից փախուստ տալ. այդ նրանց յաջողում է շատ փառաւոր կերպով, մինչդեռ զօրքերի միամիտ հրամանատարը կարծում է, որ ապստամբներին այրեց կրակի բոցերում:

Նոյն երեկոյեան այդ ցածոգի հայերը նորից դիմում են Աարդանին, պահանջելով թողնել քաղաքը: Զնայելով, որ Աարդանը և Աազգէնը ծանր հիւանդ էին տիֆով, սակայն կարճ խորհրդակցութիւնից յետոյ որոշում են մնալ քաղաքում հետեւեալ օրը ևս և թողնել քաղաքը երկրորդ օրը միայն, բայց մի զօրեղ կուխից յետոյ:

Երկրորդ օրւայ կուխի նախապատրաստութիւնները տեսնած են և պայմանաւորւած, թէ ուր պէտք է հաւաքւել գիշերը՝ կուխից յետոյ: Լոյսը բացւելուն պէս մի իրարանցումն է անցնում քաղաքում: Գաւաճան հայերը նորից առաջարկում են Աարդանին անձնատուր լինել: Ռուսաց հիւպատոսը ևս միջամտում է գործին. նախ ուղարկում է կաւազին և ապա ինքն է ցանկութիւն յայտնում անձամբ տեսնել Աարդանի հետ, և երբ այդ ևս մերժում է, ուղարկում է հետեւեալ բովանդակութեամբ մի պաշտօնական գրութիւն.

«Պարոնայք, Շաքիր փաշան առաջարկում է ձեզ անձնատուր լինել և խոստանում է կեանք պարգևել ձեզ. նա ձեզ վրայ պէտք է նայի, իբրև ժողովորդի միջի խռովարարների և ես, որպէս Ռուսաց հզօր պետութեան հիւպատոս, երաշխաւորում եմ Շաքիր փաշայի ասածները: Այս, ինչ որ գրում եմ, կարող եմ ձեր երևելիներից մէկի հետ անձամբ տեսնել և խօսել. երբէք մտքներիցդ չհանէք, որ ձեր այդ վարմունքը շատ անաջող և վնասակար հետեւանքներ պէտք է ունենայ թէ ձեզ համար և թէ ամբողջ Աասպուրականի ժողովորդի համար»: (Ստորագրութիւն և կնիք):

Աարդանի կողմից այդ բոլոր առաջարկութիւնները մերժւելուց յետոյ, զօրքը հրաման է ստանում պաշարել յեղափոխականների գրաւած տները: Ահսօրից մէկ ժամ անց հետեւակ և թնդանթաձիգ զօրքը մտնելի

նման վիտում էր Այգեստանում:

Տենդային արագութեամբ զօրքի համար դիրքեր են պատրաստում հայերի տներում, տանիքների վրայ, շաւակներով ուղղամթերք է թափւում գրաւած դիրքերում և երբ նրանք աշխատանքի մէջ էին տանիքների վրայ, հայդուկների կողմից բացւում է առաջին կրակը. Հարիւրաւոր զօրքեր ուղղական բոլոր յարմարութիւններով, Արուպաի կատարելագործւած լեռնային թընդանթներով կուում են մի բուռն քաջերի դէմ, որոնց յոյսը իրենց անձնիրութիւնը և անշեղ զարկող հրացաններն էին: Բայց ի՛նչ վարմանք, թնդանթաձիգների մօտ հայդուկները նկատում են մի եւրոպացու, որը թնդանթների նշանն էր ուղղում, ումբակոծելու ուղղակի այն տունը, ուր Աարդանն էր իր խմբով: Օ՛, կասկածը փարատում է, դա ո՛չ թէ պատահական եւրոպացի է, այլ անգլիական՝ «մարդասէր» կառավարութեան ներկայացուցիչը, — Աանի հիւպատոսը, որին իրաւամբ մեր հանգուցեալ ընկեր Պետօն յոստիկան» անունով կնքեց:

Մինչև զօրքերի դիրքերում ամրանալը, հայդուկները կարողանում էին ազատ շարժւել սենեակում և ընդգիծարել թշնամուն, այնուհետև տղայոց դրութիւնը վատանում է. թնդանթների բոմբիւնը՝ հարիւրաւոր հրացանների որոտի հետ բռնել էր Այգեստանը. գնդակների տարափը տեղում էր ամեն կողմից հայդուկների վրայ:

Քանիցս զօրքերը գրոհ տալով, ցանկանում են մտնել գրաւելու տունը, բայց հայդուկների գնդակները միշտ յետ են մղում: Բաւականին զոհեր տալուց յետոյ, երբ տեսնում են այդ փորձի անկարելիութիւնը, թընդանթները զետեղում են ցածի յարկում և ումբակոծում երկրորդ յարկի այն սենեակի առաստաղը, որտեղ տղայքն էին: Ծանր էր տղայոց դրութիւնը. թընդանթի գնդակները ումբակոծում են ամեն կողմից, հայդուկներին թողնելու փլատակների տակ: Խմբապետի կարգադրութեամբ անմիջապէս երեք հոգի թոնրան շամփրով և մէկ բահով անցք են բանում հարևան տան պատից: Տղայքը դործադրում են իրենց բոլոր ոյժը ու հմտութիւնը և կարճ ժամանակից յետոյ անցքը բանում: Անցքը մտնելու առաջին փորձը գործում է կարճկանցի Գրիգորը, զոհ գնալով թշնամու գնդակին: Տղայքը նոր են նկատում բացած անցքի անյարմարութիւնը, ուստի անցքի բացը իջեցնում են յատակի հաւասարութեան և միմեանց յետեւից սողալով՝ դուրս գալիս ապահով:

Զօրքը կատաղել էր. հրամանատարի «արշ» գոռոցով նա փորձում է իր վերջին ճիգերը, գրոհ տալով կոտրում դռները և մտնում սենեակը, անշուշտ տղայոց տեղն ու տեղը սրախողխող անելու դիտաւորութեամբ. բայց ի՛նչ վարմանք, այնտեղ ոչ ոք չկայ, բոլորն

անյայտացել են: Վարդանը բռնած նոր անցքի բացը գնդակի է բռնում զինւորներին և մի քանիսին թողնում տեղն ու տեղը, սկսւում է նորից հրացանաձգութիւնը շատ ուժեղ կերպով և տեւում մի քանի ժամ: Զօրքերը տղայոց գնդակների ահից՝ չեն համարձակւում գլուխները հանել իրենց պատնէշներից և ուրիշ միջոց չգտնելով՝ վառում են տղայոց ապաստանած նախկին տունը: Այդ դիւրին է նրանք վաղուց ընտելացել են մատնել հարիւրսուոր հայերի տներ կրակի բոցերին:

Սկսել էր մթնել. սուլթանի ասկերները մի դառն փորձով ևս համոզւեցին, որ իրենց ահեղ ուժով, անկարող են փնասել մի բուռը յեղափոխականներին, այն էլ քաղաքում, ուր կառավարութիւնն այնքան զօրք է թափել: Քլխակոր արձակում են կուրի դադարման մի թնդանօթ և թողնում կուրի ասպարէզը: Իսկ խումբը, միայն մի զոհ տալով, գիշերային մթութեան մէջ հեռանում է քաղաքից:

Տ Պ Ա Ի Ո Ր Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր

III

15/27-ին օգոստոս 96 թ.

Առաւօտեան ժամի 7-ն է, զարմանում եմ, որ ոչինչ չեմ լսում: Ամեն օր այս ժամին փողոցը թնդում էր բանջարեղէն և ուրիշ նիւթեր վաճառողների գոռում-գոչիւնով: Պատուհանս բաց եմ անում կրկին ոչինչ չեմ լսում. կեանքի նշոյլ չկայ. կարծես աւերակների մէջ լինիս:

Տանտիկինս գանգատւում է, որ ոչ կաթ և ոչ հաց կայ. նա ասում է՝ «այս անգամ հայերը կատակ չեն անում, Պոլիսը սարսափի մէջ է, այսպէս երբէք չէր պատահեր: Ես միայն Պարիզում եմ տեսել այսպիսի բան 1871 թւականին, որ ոչինչ չէին ծախում»:

Պէտք է ընկերներիս հանդիպել, պէտք է հասկանալ թէ ի՞նչ է կատարւում բանկում: Գուրս եմ գալիս. փողոցներում կատարեալ մեռելութիւն է. մարդ չէ երևում. տները, խանութները և սրճարանները պինդ-պինդ փակւած են. եռուն Քիւզանդիօնը կախարդական լուծեան է մատնւած: Հսկայական և մռայլ տները այսօր աւելի մռայլ ու ահռելի են դարձել մարդուն սեղմում և աւելի զօրեղ կերպով են զգացնում թէ ի՞նչ սարսափելի բան է մեռելութիւնը և անշարժութիւնը այնտեղ, ուր դեռ երեկ կեանքը եռում էր:

Պոլսի շներն էլ չեն վազվզում, մարդկային սարսափը անցել է և նրանց վրայ, կարծես նրանք էլ զգում են, որ սուլթանների մայրաքաղաքը ինչ որ մեծ փորձանքի մէջ է ընկել: Զլորած գունդ ու կծիկ եկած ըն-

կած են այս ու այն անկիւնում և սգում են իրենց փառիշտահի վրայ:

Ճշմարիտ, շունչս կտրւում է, այդ մեռելութիւնը խեղդում է ինձ: Մտածում եմ, թող կեանք լինի, ի՞նչ տեսակ ուզում է լինի, միայն զգաս, որ ապրում ես և շուրջդ էլ կեանքը եռում է, շարժում կայ:

Քայլերս ուղղում եմ դէպի մեծ փողոցը — Գալաթայ-Սարայ. գուցէ այնտեղ կեանք լինի: Բայց այնտեղ էլ միևնոյն բանը և աւելի սարսափելի, ոչ տրամվայ կայ, ոչ կառք և ոչ անց ու դարձ անող: Շքեղ կաֆէները կիսաբաց են, նրանցում երևում են մի քանի դժգոյն, շարած ու խորհուրդաւոր դէմքեր, դրանք լրտեսներ են, և երբ մի յանդուգն քաղաքացի սիրտ է անում մտնել կաֆէ և հանդիպում սուլթանական այդ շքեղ մոլիկ ոգիներին, տեղն ու տեղը շքչկւում է մի վայրկեան կրնկների վրայ պտտւում և չի կարողանում որոշել՝ դուրս գնայ, թէ նստի:

Ճշմարիտ է, քաղաքացիներ չկան, բայց փողոցը զինւորներով լիքն է. դրանք ըլու ու մունչ հրացանները պատրաստի բռնած՝ մեքենայի պէս առաջ են շարժւում և շարունակ աջ ու ձախ դէպի բարձր նայում: Ամեն մի վայրկեան սպասում են, որ իրենց գլխին կնկնի հայ դժոխային «գինանիտը»:

Ի՞նչ մեծ միտթարութիւն. վերջապէս սուլթանի արիւնը ուշտ զինւորները սարսափում են հայից:

Երբեմն երևում են և ծածկւած կառքեր, դրանցում նստած են դիպլոմատներ, կամ թիւրք բարձր պաշտօնեաներ, ոչ որ չի համարձակւում գլուխը կառքից դուրս հանել: Դրանք գնում են բանկ, ուր մի բուռն հայ քաջեր ամուր ու խրոխտ դիրք բռնած, ոտքերը սուլթանի և վատ դիպլոմատիայի կրծքին սեղմեցին և ստիպեցին ստրուկ հայի ոտքերը լիզել:

Ես էլ դէպի բանկի կողմը անցայ. դեռ ինձ յայտնի չէր, որ մեր ընկերները արդէն բանկից դուրս են եկել: Քանի բանկին մօտենում եմ, այնքան շատ տաճիկ է երևում, դրանք բոլորն էլ շարած են, տաճիկն յատուկ գոռոզութեան նշոյլն անգամ չէ երևում նրանց դէմքերին, փուշները կտրւած է, սարսափն է թագաւորում նրանց հոգում: Շւարեւ են:

Եւ ինչպէս չը շւարեն, աշխարհը փոխել է. ոչխարի նման կոտորուող ստրուկ հայը օրը ցերեկով տիրել է մայրաքաղաքի ամենակարեւոր հիմնարկութեանը, դժոխային զէնքով կոտորել է դիմացը եկած թիւրք զինւորին ու ոստիկանին, խաղկ ու խայտառակ արել սուլթանին և յաղթական կերպով եւրոպացու նաւը գնացել:

Ճանապարհին կենդ ու կունդ հայեր էլ են հանդիպում, մանաւանդ գաւառացի գոնապաններ, բոլորն էլ լուրջ են, ստրկական հայացք չկայ, նրանց սև, խոշոր ու շարունակ տխուր աչքերում փայլում է մի գաղտնի գոհութիւն և հրճւանք. զգում են թշնամուն հասցրած հարւածի զօրեղութիւնը:

Անցնում եմ Պերա-Պալասը, ուզում եմ վար իջնել, բայց փողոցը լրտեսներով ու զինուորներով լիքն է. այդ երեկոյ միտք ունին բանկի շուրջը գտնեա՞ծ տըներն ու խանութները խուզարկել, բանկը դեռ անմերձանալի է: Յետ եմ դառնում և անցնում ընկերոջս մօտ: Մեր ուրախութեանը չափ չկայ, գրկախառնւում ենք՝ վեր-վեր ցատկաւում, մեր ծրագիրը գրեթէ ամբողջովին յաջողւել է. դեռ կոտորած էլ չկայ: Այդտեղ գալիս են և մեզ իմացնում, որ տղայքը արդէն առօրփառօք դուրս են եկել: Մի փոքր տխրում ենք, որ ժամանակից շուտ են դուրս եկել: Բայց և այնպէս, այդ վայրկեանում մենք պատրաստ ենք մեր հերոս ընկերներին Աստծոյ տեղ պաշտել:

Եւ ինչպէս չպաշտել. 26 անձնուրաց հայ երիտասարդներ սպարտացուն վայել քաջութեամբ կատարեցին յեղափոխական ամենայնզուգն մի գործ: Ինչպէս չհրճւել և չհաւատալ, որ հայը էլ չի կարող ստրուկ մնալ, չէ որ այդ երիտասարդները բողոքն էլ տաճկահայի հարազատ զաւակներն են: Այդտեղ յայտնում են և Սամաթիոյ հերոսների կոիւր, Հերոսներ, որոնք առիւծների նման են կուռել և հարիւրով զօրք ջարդել:

Արդէն երեկոն մօտենում էր, երբ կրկին փողոցում աղմուկ բարձրացաւ, Գալաթա-Սարայի դիմաց կրկին ուռւմ են գցել:

Կրկին սարսափ, կրկին իրարանցում:
Կրկին հրճանք և ոգևորութիւն:

Պոլիսը հայերին է պատկանում, էլ կառավարութիւն չկայ, հայ յեղափոխականն է թագաւորում, երեկայ ստրուկ հայն է սառուեցնում: Ի՞նչ երջանիկ վայրկեան:

Դուրս եմ գալիս ընկերոջս մօտից և տուն գնում: Գալաթա-Սարայի դիմացով անցնելու տեղ չկայ, լիքը զօրք է. Պոլիսը ամբողջովին պաշարւած է: Սուլթանը կատաղել է. տղերքն էլ բանկումը չեն, հրամաններ են արձակւած պատահած հային կոտորել, անմեղ ժողովորդից վճռել լուծել: Դրա պատրաստութիւն է տեսնում:

Ես մի նեղ փողոցով տուն եմ գնում, մարդ ու մուրդ չի երևում, լուռւմ է հեծելագօրքի ձիերի կանոնաւոր դոփիւնը, երբեմն-երբեմն էլ քաղցած շների ոռնալը: Մարդ զարգանդում և սառսուում է:

Տուն եմ հասնում, տանտիկինս դուռը բաց է անում և յանդիմանում, որ այդքան ուշ եմ տուն գալիս: Յայտնում է, որ գուցէ այս գիշեր բոլոր քրիստոնեաներին կոտորեն. թիւրքերը սաստիկ կատաղած են:

Ներս եմ մտնում, տնւոր յոյն ջահիլ տիկինը բոլորովին դալկացած նստած է բազկաթոռի վրայ. նրա աչքերից ծանր-ծանր գլորւում են արտասուների խոշոր կաթիլները: Տիկնոջ ամուսինը, որ մի հայ երիտասարդ է, այսօր էլ չէ եկել: Տիկինը հաւատացած է, որ նա սպանւած է: Մի վայրկեան ես խղճում եմ բարի հելլենուհուն և ուզում մխիթարել բայց յանկարծ միտքս

է ընկնում մեր դժբախտ հայրենիքը, ուր տասնեակ հազարներով հայուհիներ տարին տասներկու ամիս դառն արցունք են թափում և գուցէ հենց հիմա հազարաւոր հայ կանայք սուգ ու շիւանի մէջ են: Միտս քարանում է, տիկնոջը մխիթարելու խօսք չեմ գտնում:

Երբեմն ատրճանակի ձայներ են լսում, հելլենուհին ճշարով տեղիցը վեր է թռչում և դէպի պատուհան վազում — նա սպասում է տաճիկ ամբոխի յարձակմանը: Ես անձնատուր եմ եղել իմ մտքերին, յիշում եմ այն օրը, երբ առաջին անգամ ստրուկ հայը իր թուլացած և դողողոջոյն ձեռքով առաջին ատրճանակը արձակեց և առաջին դաշոյնը միեց մեր թշնամու կուրծքը. ես մտածում էի՝ արդեօք կը գայ այն օրը, երբ հայը իր ոտքը կը դնի սուլթան կոչւած վիշապի կրծքին. ահա՛ հասել է այդ օրը, բայց որչափ զոհեր ենք տւել և գուցէ տանք էլ: Ճշմարիտ է, այսօր Պոլիսը հայ յեղափոխականին է պատկանում, բայց վաղը, միւս օրը Ի՞նչ կը լինի. մենք կարողանա՞լու ենք մեր թշնամուն բոլորովին խեղդել: Այո՛, կը խեղդենք:

Յոյս, կասկած, վհատութիւն հերթով պաշարում են ինձ . . . բայց կրկին յոյսն է յաղթող հանդիսանում. սպազան մերն է, միայն չթուլանանք, չվհատուինք:

Թ Ի Ի Բ Գ Ի Ո Յ Ե Ո Ի Բ Զ Ը

Վերջի քանի ամիսներուն մէջ շատ քանիք անցան դարձան. մերթ ժառուկ, մերթ յայտնի. թագաւորներ, իշխանաւորներ քերան քերտի եկան, կարծեսց փոխանակուած իշխաններ կուսն եւ միլիթանաւոր ժողովուրդներ անոնց շրթունքէն կախուած մնաց: Դ ի նչ հեզուութիւն մարդկային պարզամտութեան համար . . . Նաեւ Եւրոպայի հանրային կարծիքը հետզհետէ սկսաւ յորդան տալ: Կառավարութիւնները հասարակաց հոսանքը կեցնելու ջանքեր ցրին, որովհետեւ լնտր պտոթկացումը կապաւանար նաեւ իրենց գոյութեան: Սուլթանին յորդոյններ, շան քարոզներ կարդացին--գուցէ գողտուկ սիրտ ալ տւին անոր, ինչ որ անհաւանական չերուիր.--լրագիրները պտոացին, քակեցին եւ սուլթանը ամենուն իր արեւնով պշուած քերտնը սրբեց դիւային ծիծաղով մը: Այո՛, դիւանագէտները կաշկատին, բայց իրենց քննները քննելու համար: Ռուսիա իր տեսակէտը ունի. ճիշմաները կարած, ժանիքները ցցած կը մնչէ եւ կը գնորմանայ, որ դեռ հայ ժողովուրդը ընաշինչ չեղաւ, Աւստրիա կը ճգնի քաղաքակաւութեան արդի վիճակը պահպանել, շան պէս կը դողայ իր կացութիւնէն: Ասլիխան կուզէ հողագունը կուսն, շուգեր իր մէկ գիւտորին քիթը արիւնի, բայց հայութեան արեան վրայէն անվախանալու նաւերը հեշտութեամբ կըման լողալ:

Բարեխիտ անվախացիք խորհցան հայոց դժբախտութիւնը շահագործել, գանձող Տմուկուայի արեւակէզ անապատներուն մէջ նետելով: Խորհանցին իրիստ քնորոշ նմանութիւն մը կընէ իրեն վերաբրւած Աշխարհացոյցին մէջ: Ասլիխ մեծ կուզին «պարուկի» կը նմանցնէ: Կը գուշակէ՛ր արդեօք մեր երանելի պատմագրահայրը, թէ օր մը այդ տարուկի ծեւ ունեցող կըզին տարուկ կառավարութիւն մը պիտի պահէր իր ծոցը:

Պատկ անգամ կեղծաւոր աշքերով կը դիտէ հայոց լացը: Երկնային շահերը չեն ներքեր, որ ս. Պետրոսի փարախէն դուրս վատիկանի գլուխները տարածել: Եւ օրէ օր կապաւէ, թէ՛ կ'ըք յուսահատ հայերը պիտի դիմեն իր հողաթափին ծայր համբուրելու:

Դեկ Գերման կառավարութիւնը շուսկան անտարբերութեամբ կը նայի ամբողջ հայութեան վրայ. ան կը խորհի հայութեան տեղ իր նկնածները լեցնել Ասիոյ քարեքեր գաւառները: Երբ Եւրոպայի հանրային կարծիքը արթնցեր կըսենք, անշուշտ ամեն տեղ յոյն աստիճանով չէ: Փրանսայի մէջ շարքեր կըլլան այլ

ագով. մանաւանդ վերջերս Փրանսական կործարարներն մէջ «չայ-
կական հարցի» մասին եղած հարցասխորուով արեւտաւոր նշան մ'է
Փրանսիայի պատեւական զգացման գարթներուն:

Հանութի, արտաքին գործոց նախարարը, «չայկական հարցի» մա-
սին եղած բուն ծառերուն ծածման կերպով պատասխանեց եւ
խտաողմանցեալ, թէ արդարեւ զազանութիւնները կարծաւմէս աւե-
րի ծանր են. բայց, ինչպէս ևր պահանջէ դիւանագիտական կեդծա-
ւորութիւնը, յայցանքը բաժնից թէ հայերուն եւ թէ թիւրք առաւ-
վարութեան միջև: Յայտնեց նաեւ, թէ ցարի այցելութեան անթիւ
արդէն հարկ եղած քանակութիւններն եղած են, թէ եւ չքսաւ, թէ
ինչ էին այդ քանակութիւնները: Եթէ Հանութի, ամբողջ ազգի մը
մարտիրոսութեան վրայ տարտամ, երկուսի խօսքերով կործարար-
նը խաբելեց, բայց հաստատ կերպով մշտեց, թէ Փրանսական կա-
ռավարութիւնը, Մարաշի մէջ սպաննած հայր Մալխտոսի սպան-
ման համար թիւրք կառավարութեանէ զոհացում եւ ոճրագործներու
խտաի պատժելի պահանջեց: Հանութի Ռիշէտի կեանքը զբաժէ
Ռիշէտէն Փրանսացի այն քաղաքագէտն է, որ երկ կեանքն մէջ
«սպատակ մեջը կարողարացնէ»-ի սկզբունքով ամեն հարցը գոր-
ծեց եւ մեռած պահուն Աստուծէ խնդրեց, որ ներէ իր քրտիներուն,
որովհետեւ ինչ որ քրտն էր իր ազգին մեծութեան համար էր: Փրան-
սայի արդի նախարարականը հիստող մ'է այդ մարդուն:

Հանութի ծառին պատասխանեց ժօրէս, ընկերավարական մեծա-
զոյն ատենարանը: Ժօրէսի ծառը իր զգացումներու անկեղծութեամբ,
բարձրութեամբ եւ ուժգնութեամբ մտքի ու սրտի ամենէն վնամ ար-
տապապտութիւնն է: Փրանսայի կործարարները շատ ջնջ արծազանք
ուած է այլքսն լայն քնատրութիւն կրող ծառերու:

Անգղիական միջնակներու մէջ խուսած ծառերը կրօնի ներքնեւած
մարդասիրութեան հողը կը բուրդէին: Ժօրէս իր վարդապետութեամբ
հաստատեց, զուտ մարդասիրական բարձր ոգի ու դուս թշուառ
ազգի մը ծծունած պաշտամողականն մէջ: Կծու եւ անաշատ կեր-
պով ծառից արդի ընկերութիւնները, վարքութիւնները եւ անոնց
լրբութիւնները ու ընչարարողութիւնը, մեղադրեց Փրանսան, որ կը
ըստսւնէր իր վերստն սկզբունքները եւ պատակեց Ռուսիան, որ
թարուն դիտուներ կը մուռսներ: Վերջապէս Հանութի երեսին
զարկաւ, որ կը ջանար դահիճը պաշտպանել եւ զոհերը ամբաս-
տանել:

Ժողովրդեան մեծ տրեւունք ակելցուց. «Մուլթանը չէ միայն
պատասխանատու. այլեւ Եւրոպան, այլեւ Փրանսան: Որովհետեւ
կառավարութիւնները, ամեն մէկը իր գծով շահերով մողորած, չեն
կրնար տարրական համաձայնութիւն մը կայացնել վերջ տալու
համար բարբարոս արարքներու, պէտք է որ Եւրոպայի գործարար
դասակարգը ծնող ամեն այլ դասը, պէտք է ամենուրեք իր գայրու-
թը ու կամը յայտնէ եւ այսպէս ըննադատէ թշուառական պետու-
թիւնները, որոնք գերաւ չի բզբանելու: համար, թոյլ կուտան, որ ամ-
բողջ ազգ մը խողխողի»:

Իրաւ է թէ նախարարութիւնը մեծամասնութիւն շահեցաւ, բայց
ժօրէսի կողմն էր բարոյականը եւ մարդկային գիտակցութիւնը:
Եւ ասոր համար է, որ կը հաւատանք թէ պետութիւնները իրենց
փարիսեցիական եւ անսիրտ վարմունքով մտքերու մէջ նոր հոսանք
մը առաջ կը բերեն, որուն առջև ոչինչ կարող պիտի ըլլայ դիմա-
գրաւել:

Ազգիոյ մէջ դեռ կը շարունակուին տեղ-տեղ ծառեր լսել, որոնք
ո եւ է նշանակութիւնէ զուրկ են: Մալգարին ալ Փրանսական կոր-
ծարարներն քիչ յետոյ խոսեցան արտաքին քաղաքականութեան
մասին: Բայց յարգելի լորդը նոր բան մը չքսաւ: Միշտ նոյն ա-
ւելուիմն է: Թէ «բացի միջամտութիւնը թիւրքի գործերուն մէջ
ընդհանուր պատերազմի պատճառ կը լլայ, թէ անգլիական նաւերը
ցամաքի վրայ չեն կրնար լողալ, թէ տէրութեանց մէջ կառարեալ
համաձայնութիւն կը տիրէ»: Բանքը, զորս Մալգարին թութակի պէս
զոց քրտն՝ ամեն անգամ կը կրկնէ, բայց ինչ որ Մալգարիի բերնին
մէջ գարմանք կը զբաւէ, թիւրքիան նախախնամութեան վճռին
յանմանն է, կը նմանի այն քաղեմիտ միամիլներուն, որոնք կը
թշամանք մը կրն մէկէն, իրենց բողո անկարողութեամբ կըսեն
«Աստուած պէլատ տայ»: Եթէ այդ նախախնամութիւնը միայն նա-
խարարներուն չի տէր, մինք ալ պիտի ինդընէնք իրմէ, որ աշխարհ
նի վարչեմբու զլիւն կայծակներ թափէր:

Այժմ ամեն աւք յառած է դէպի Ռուսիա, անկէ կապասն վեր-
վերջն վճիղ:

Մեզի համար մեծ է, թէ ինչ կը դառնայ դիւանագիտական
նկուղներու մէջ, միայն սա-չափ որոշ է, թէ թիւրքիոյ ծակատագրին
վայցէն ազուանքը կրկնաւով կանցնին եւ ... սուլթանը կը բօսնու:

Յոք թիւրքիոյ շուրջը այս բաները կը դառնան, սերսը ինչե ո
կըլան արդեօք:

Մուլթանը քրտ. ինչոր վարդկային գազանութիւնը իրեն կը թն

լաղբեր ընեց: Իրք արեւելեան հեղք վեհագեան, արհամարեց ամեն
հաշիւ, ամեն հետատեսութիւն, եւ այսօր տնտեսական ու ելեւմտա-
կան տագնապին առջև լնգուն ընուած կը դանդաղէ: Ի՛նչ քրտա եւ
ի՛նչ եղաւ: Թիւրքիոյ զանձարանին մէջ վնքերը ծերիտ կը խաղան
ու երկըքը քրտութեանց ու կամայականութեանց թատր եղած է:

Հայերը կը ճգնեն քանտերուն մէջ, որոնց վիճակից է այժմ
«Երիտասարդ թիւրքիան»: Մուլթանը եւ արդի ոստիկանութեան
նախարարը կառաղի հալածարար կը մընն ստոնց դէմ: Գետական
բարձր վարժարաններն բազմաթիւ ձեռքակալութիւններ կը կա-
տարէին: Ամեն մարդ սըքած կը լրէ սարսափահար: Գագանք մընչելով
իւ պոքը կը փարտէ: «Նախ յիմարեցուցանէ եւ ապա կորուսանէ»:

Ոստիկանութեան նախկին տնտեսաչալ նագրմ փաշան պաշտօ-
նանկ եղած է եւ կըսնն թէ Արագիա պիտի արտորի: Նագրմը այն
զգելի ղէմքերէն է, որ Համիտի գարշելի անուանին հետ թեթեւի
պիտի քալէ պատուութեան մէջ, իրենց ամուսնը արիւնով զբւած:

Հայոց համար կարեւոր եղելութիւնն է նոր պատերաքի ըստ-
րութիւնը: Կորեանի ազգակործան կուսակցութիւնը պարտութիւն
կըսած է: Նախատիւք մ'է մեր ազգին շուրեանի գոյութիւնը: Ազգին
այս ճգնաժամին մէջ անբարոյական շուրեանէն աւելի իմ կընար
սուլթանի ստոր գործիք վըլալ:

Նոր պատերաքը Օրմանեան, ազգին ծանօթ անձնաւորութիւն
մ'է. այժմէն ոչ մէկ դատաստան չենք կարող ընել իր գործերը պի-
տի վկայեն, թէ ինչ արժանիք ունի: Մենք անքթիթ կը հետևինք իր
քայլերուն եւ կարծանագրները ինչ որ պէտք է մեզի: Միայն սուլթա-
նի ուղեղին մէջ սա պէս սկսելու էր «գալթիւ. ծանի, խընքը փա-
տիշարմ» (ոճրագործ, մարդասպան արքայ): Սա աւելի ընական
պիտի ըլլար:

Մուլթանը շատ զոհ մտացի է Օրմանեանի ուղեղին, որուն պա-
տասխանած է սա պէս «վերջերս պատահած դէպքերը ցաւ պատ-
ճանեցին ինծի, կառավարութեան ծնող առած միջոցներու շտրսիւ
վերջ տրեցաւ այդ անախորժ ղէպքերուն: Հայերն իմ գաւալներս
են, ես միշտ սիրած եմ հայերը: Իսլամաց եւ հայոց մէջ մտած ցըր-
տութիւնը յուսով եմ, որ ձեռ օրով կը վերսայ: Չեզ տեսնեմ, գոհ
ըրէք զիս»:

Մենք զոհ կընենք ըեզ, սպասով եղիր:

ԿՈՒԲԱՅԻ ԱՂՍՏԱՄԲՈՒԹԻՒՆԸ

Ա Ն Տ Օ Ն Ի Օ Մ Ա Ր Ա Է Օ

Հեռագիրները նորից հաղորդելն Կուրական ապ ամալ-
րութեան դեկալար Անտօնիօ Մարտօի մահւան ցաւալի
լուրը: Սպանիացիք օտտախկ տեղյանք ունեն Մասէօին
սպանւած տեսնել, եւ այս պատճառաւ անպակաս էին նը-
րա մահւան առթիւ տարածւած լուրերը, բայց այս ան-
գամ, դժբաղդարար, հեռագրական լուրը հաստատ է թւում:
Սպանիական կառավարութիւնը այդ բանն իր համար
մեծ յաջողութիւն է համարում, փողովուրդը հրճում է եւ
երիտասարդութիւնը ազակալից ցոյցի կատարում:

Անտօնի չեն այս բոլոր վայրենի ցնծութիւնները ընկած
հերոսի դիակի առաջ.—Մասէօն արժանի է դրան,— եւ
հենց դրանով կարելի է չափել մեծութիւնը այն մարդի, որ
իր մարող գոյութեամբ պատուհաս է կդկ Սպանիական
այլասեռւած հիգալգօների փտած իշխանութեան:

Լինելով պարզ աշխատաւոր՝ երկրագործ, հողիւ, չորե-
պան, Մասէօն չէր կարող անտարբեր աչքերով դիտել Վե-
լասկէի փոխանորդների անխիղճ կեդեքումները: Տանա-
մեայ ապտամբական կուռի փամանակ (1868-1878) 20-
ամուայ Մասէօն իր երիտասարդական բոլոր տուլնով տըր-
ւեցաւ այդ շարեման եւ անպին հոչակ ստայաւ իր օրի-
նակելի քաջութեան ու ուզմաղիտական տաղանդի շը-
նորհիւ: Նրա հայրը եւ եօթ եղբայրները նահատակեցան

կուրի մէջ, իսկ ինքը կենդանի մնաց 22 վերք ստացած:

1895թ. փետրուար ամսին ղեներալ Մասէօն նորից մուտք գործեց Կուբա եւ անմիջապէս իր ձեռքն առաւ ասպետամհների գլխաւոր հրամանատարութիւնը: Մի շարք նոր փառաւոր յաղթութիւններից յետոյ նա դառաւ ամենքի պաշտօնէն, ամենքի ոգևորիչը: Այդ մարտու դէմ էր լարւած սպանիական կառավարութեան ուշադրութիւնը. նա ամեն միջոց գործ էր դնում Մասէօնն ոչնչացնելու, եւ նրան յաջողեց... բայց ամենատմարդի միջոցներով: Նիւեօքը Հերալդի հաղորդելով Մասէօն թուէն աւերւած է կաշառած մարդկանց միջոցով. իսկ Իվինինգ Վոլդ-ի ասելով Մասէօն խաբեբայութեամբ կանչւել է սպանիական զորապետի կողմից բանակցութիւնների համար եւ ամենատար կերպով սպանւել:

Սպանիական կառավարութեան մակալիէլական ընթացքը ընդհանուր դայրոյթ է առաջ բերել ամենուրեք, մանաւանդ Հիւսիսային Ամերիկայում, որը կապւած լինելով անտեսական շահերով իր հարեւան կղզու հետ, շատ մտ է ընդունում իր սրտին նրա դրութիւնը եւ միշտ առիթներ է փնտրում նրա գործերում միջամտելու:

Գույէ եւ ճիշդ է, որ սպանիական կառավարութիւնը ազատեց Մասէօնից: Բայց անպայման ճշմարտութիւն է, որ նա իր ծախսած հարիւրաւոր միլիիօններին՝ դեռ նոր հարիւր միլիիօններ, իր կոտորած տասնեակ հազար զինուորներին՝ նոր տասնեակ հազարներ պետք է աւելացնի: Անհասանքի մասով կանգ չեն առնիլ երբէք ժողովրդական շարժումները: Կուբայում Մասէօններն անպակաս կը լինեն, եւ մենք յոյս ունենք հետո ովկիանոսում անյողզողք կուռղ Կուբան տեսնել շուտով անկախ, ինքուրոյն:

Վ Ե Ր Զ Ի Ն Յ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

(Ե Ի Ր Ո Պ Ա Կ Ա Ն Թ Ե Ր Թ Ե Ր Ի Ծ)

Բէյտերի Գործակալութիւնը հաղորդում է, որ սուլթանը մի իրագէով ընդհանուր ներումն է շնորհել բոլոր բանտարկւած հայերին:

— «Փրանկֆուրտեր Յայտունգին» հաղորդում են, որ Նելիգօլը ոչ թէ ուշտիմատում կը ներկայացնի սուլթանին, այլ նա միայն խիստ զիմուռներ կանի՝ բարենորոգումների անմիջական գործադրութեան մասին, յայտարարելով, որ ոչ մի պայմանով կարելի չէ այդ յետաձգել:

— Միլենոյն թերթը հաղորդում է, որ Նելիգօլի Պոլիս ժամանելուց անմիջապէս յետոյ տեղի ունեցաւ դեսպանների խորհուրդ: Այսօր Նելիգօլը կը ներկայացնի սուլթանին պետութիւնների հրամանները:

— «Դէյլի-Նիւզին» հաղորդում են Վիեննայից, որ Գօլուխովսկին յայտնել է Նելիգօլին Աւստրիայի պատրաստակաճութիւնը՝ պաշտպանել Ռուսաստանի քաղաքականութիւնը արեւելեան հարցում:

— Լօնդօնից հաղորդում են, որ դեսպանները իրենց անցազրերը յետ կը պահանջեն, եթէ սուլթանը մերժի իրագործել խոստացած ըէֆօրմները:

ՆՆՈՐԱՏՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՅՈՒՑԱԿ

Ռուսաստանի Սեդ-Բիէր քաղաքի «Արաքս» խմբից Վագրի միջոցաւ ստացւած է 25 ռուբլի:

Քօլք. Սօֆիայի կօմիտէի միջոցաձ երկու ընկերներէ նւէր 10 ֆրանկ:

Լատօից 2 ռուբլի:

Է. Ծ. քաղ. Թամարից 50 ֆր., «Պայթուցիկի» բեկորից 20 ֆր.

Տապար քաղաքի կեզր. սնդուկի մէջ ստացւած են. Նոր-Բերդէն Հրաչեայի ձեռքով 55 ռուբլի, Հրատէն 1 ատրճանակ, քանի մը անգամէն 120 դուռ, Շինականէն 1 ըէփօրվէր և 18 փամփուշտ, Խենթ-Շուշանէն 1 ատրճանակ և 25 փամփուշտ, Հորոյէն 1 ատրճանակ և 9 փամփուշտ:

Ամերիկայի Քօլ-Բիվոր կօմիտէի սնդուկի մէջ ստացւած են 18 դօլար և 25 սէնթ:

Գաղթավայրէն Արտաւազդ 10ր., Շանթ 7ր., Սոխակ 3ր., Խեղճ 100ր., Սերը 60ր., Կապք 75ր., Սէր 150ր., Հայր Ա. Բ. 75ր., Օշական խումբ № 423 150ր., Լուսին 2ր., Սլուկ-Միհր-Չաւէն 50ր., Խնձորիկեց Արիւն 10ր., Երևանդալոյս 40ր., Գետեզերքէ Վարդան 5ր., № 50 5ր.

Համընտի կօմիտէի ձեռամբ՝ 5 դօլ. Գ. Իզմիրեան, 3 դօլ. Ս. Մարտիրոսեան, 3 դլ. Մալխասեանց. Կ. Տ. Բաշոյեան, Գ. Պօյաձեան, Յ. Լուսոյեան, Գ. Մաղօեան, Միս, Կիկօ Միհրիկե սն երկ-երկու դլ. Յ. Դերձակեան, Բիւրաձեան, Խ. Շամոյեան, Տ. Թովմասեան, Յովհաննէս Դերձակեան, Մ. Զուրնաձեան, Հալաձեան, Մամիկոնեան, Ս Տ. Յարութիւն, Ղուկասեան, Ս. Տ. Արամեան, Էջ. Մընօ, երկու վիճող մէկ-մէկ դլ. Ս. Դերձակեան, աղքատ ոմն 50-կան սնթ., 3դլ. կօմիտէի սընտունկէն, գումարը 40դօլ.

Փօլ Բզվիրի կօմիտէի ձեռամբ՝ 27 դլ. 50 սնթ.

Ռուսար քաղք. Արրահամ Տիւնձեանէն 1 դլ.

Ամերիկայի Փրօվիտէնս կօմիտէի ձեռամբ ժողոված՝

Ն. Մ. 5 դօլար, Ա. Բ. 5 դօլար, Ն. Թ. 5 դօլար, Գ. Պ. 5 դօլար, Յ. Թ. 5 դօլար, Գ. Ճ. 5 դօլար, Պ. Թ. 5 դօլար, Պ. Մ. 5 դօլար, Կ. Ե. 3 դօլար, Ս. Կ. 3 դօլար, Ա. Թ. 3 դօլար, Թ. Ճ. 3 դօլար Ա. Ա. 2 դօլար, Մ. Բ. 1 դօլար, Պ. Ն. 1 դօլար:

Առաքելեան 5 դօլար, Մ. Բ. 4 դօլար Ս. Մ. 3 դօլար, Խ. Ս. Խ. 2 դօլար, Կ. Յ. 2 դօլար, Ա. Չ. 2 դօլար, Է. Ս. 2 դօլար, Ա. Յ. 1 դօլար, Ա. Ա. 1 դօլար, Ա. Ի. 1 դօլար, Կ. Խ. 1 դօլար, Ա. Ա. 1 դօլար, Մ. Կ. 1 դօլար, Անձ մը 1 դօլար, Չ. Ս. 1 դօլար, Գ. Ս. 1 դօլար, Պ. Ս. 1 դօլար, Մ. Տ. Մ. 1 դօլար, Տ. Ս. 1 դօլար, Ղ. Պ. 1 դօլար, Անձ մը 25 սէնթ, կօմիտէի սնտուկէն 50 դօլ. 75 սէնթ, գումարն է 140 դօլար:

Դաշակցութեան անամօթներից խնդրում է թղթակցութեան և ներատուութեան համար դիմել.

Rédaction du Droschak, Genève (Suisse)